չորս միլիոն ոսկի ունէր։ Ամէրի սպանողք՝ հանեցին զԱպուհալի ի բանդէ, և վզրուկ ու զօրապետ կարգեցին իր հօր և պապուն նման։ Անոնցմէ աւելի իշխանասէր և յանդուգն երեւցած համարուի սա. իբր զի, Ամէր արու զաւակ չունէր, և ըստ իրենց օրինաց կանայք չէին թագաւորեր. և զի իր կինն յղի էր (իր սպանուած ժամանակ), սպասէին Եգիպտացիք իրենց բաղդին, Ապուհալի այլ իրենին։ Կինն ծնաւ աղջիկ. Ամէրի եղբայրն Հաֆըզ՝ իսկոյն յաջորդեց. և տեսնելով որ Ապուհալի բոլոր իշխանութիւնը և գրեթէ գահն ալ գրաւել կ'ուզէ, տարի մի չանցած՝ (1130-1) սպաննել տուաւ զնա։ Անունէն յայտնի է որ սա այլ իր հօր պէս մալիման էր. և չափազանց իշխանասիրութեամբն՝ կենացը հետ իր հարց յիանամեայ վզբրկութեան այլ վերջ տուաւ։

Զ.

Շահնշահի մահուանէն տասն տարի մի վերջը՝ ուրիշ Հայ վզուրկ միանգամայն և քաջ զօրավար մի փառօք փայլի յԵգիպտոս. Աբուսահլի Զուհրայ վանաց ստորա-